ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Հանկարծ գլխի ընկնելով՝ պայթում է մի հսկայական ծիծաղով։) Փա՛հ, փա՛հ, փա՛հ, փա՛հ…

ՄԻԻՍ ՀՍԿԱՆԵՐ.– Հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հա՛, հա՛, հա՛, հա , հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ…

Պալատականները սկսում են կողոպտել պալատը՝ թանկագին իրերը խոթելով գրպաններն ու ծոցերը, միաժամանակ շարժումներ անելով փախչելու, վախենալով ինչ-որ սպառնալիքից։ Ներս է վազում Ուստիանը եւ հետը բերած պարկը լցնում զանազան իրեր։ Վարագոյրը փակւում է։

ՆԱԶԱՐ ԵՒ ՍԱՔՈ.– (Աւանսցէնի երկու կողմից գոռալով ընկնում են իրար գիրկ եւ վայր թափւում սարսափահար։)

ՊԱՐՁԱՇԷՆՑԻՆԵՐ.– (Ներս են մտնում աւանսցենա եւ հոմերական ծիծաղով շրջապատում Նազարին ու Սաքոյին։) Մթնում է։ Կրկին լուսաւորւում է։ Աւանսցէնը դատարկ է։ Ներս է մտնում Ուստիանը մահակը ձեռին ու պարկը շալակը։ Նայում է չորս կողմ։ Շփոթուած է։

ՈՒՍՏԻԱՆ.– Բա որ ասում էի երազ է՞… Է՛ս էլ բախտ է… (հեռանում է։)

ՎԱՐԱԳՈՅՐ ՓԱԿՈՂ.– (Խորքից ներս է գալիս եւ առաջանում դէպի ռամպան)։ Բախտ չէ, Ուստիան, հիմա՛ր իմաստուն, այլ խրտվիլակներ եւ խաբեութիւն։ Հեքիաթ է սա հին, երազ չարաղետ, անցաւ, գործ չունենք այլեւս նրա հետ։ Էլ ի՞նչ թագաւոր, ի՞նչ Նազար, ի՞նչ բան։ Փչեմ կմթնի այս բեմն ու ռամպան։

Փչում է։ Բեմը մթնում է։

ՎԵՐՋ